Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն հայտարարում է մրցույթ
քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե) հայտարարում է ներքին մրցույթ՝ բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-4-28.1-Մ4-3) քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Կոմիտեի բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության վարչության փորձարարական մշակումների և ինովացիոն ծրագրերի բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 18-4-28.1-Մ4-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի բնութագրի, պաշտոնը զբաղեցնող քաղաքացիական ծառայողի համար սահմանված գործառույթների, իրավունքների, պարտականությունների, պաշտոնին ներկայացվող պահանջների՝ պաշտոնի համար պահանջվող կրթության, աշխատանքային ստաժի, աշխատանքի բնագավառում փորձի, մասնագիտական գիտելիքների, կոմպետենցիաների, ինչպես նաև աշխատանքի կազմակերպական լիազորությունների և ղեկավարման շրջանակների մասին տեղեկատվությունը ներառված է պաշտոնի անձնագրում, որի էլեկտրոնային օրինակին կարող եք ծանոթանալ հետևյալ հղմամբ՝ http://hesc.am/files/h17-18-4-28.1-m4-3.pdf

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. դիմում (ձևը լրացվում է էլեկտրոնային եղանակով),
2. անձնագրի կամ նույնականացման քարտի լուսապատճենները (եթե անձը նույնականացման կամ սոցիալական քարտ չի ներկայացնում, ապա անհրաժեշտ է ներկայացնել անձին հանրային ծառայության համարանիշ տրամադրելու մասին տեղեկանքի կամ հանրային ծառայության համարանիշի տրամադրումից հրաժարվելու մասին տեղեկանքի լուսապատճենը),
3. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
4. աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի լուսապատճենը,
5. արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի լուսապատճենը կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի լուսապատճենը,
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափսի:

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԱՌՑԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

<u>Ուշադրություն.</u> Ներքին մրցույթին կարող են մասնակցել տվյալ մարմնի հանրային ծառայողները և քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները («Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2):

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն ընդունվում են էլեկտրոնային եղանակով՝ Քաղաքացիական ծառայության գրասենյակի կայքէջի՝ https://cso.gov.am/ միջոցով:

Էլեկտրոնային եղանակով դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել https://cso.gov.am/ կայքէջի «**Գլխավոր**» էջի «**Մրցույթների հայտարարություններ**» բաժնի «**Ղեկավար և մասնագիտական**» ենթաբաժին: Ծանոթանալով մրցույթի մասին հրապարակված հայտարարության բովանդակությանը՝ քաղաքացին կարող է հայտարարության տեքստի վերջում նշված «**Դիմել**» ստեղնի օգնությամբ ներկայացնել էլեկտրոնային դիմում: «**Դիմել**» ստեղնը սեղմելուց հետո բացվում են «**Մուտք**» և «**Գրանցվել**» պատուհանները: https://cso.gov.am/ կայքէջում գրանցված լինելու դեպքում անհրաժեշտ է լրացնել էլեկտրոնային փոստի վավեր հասցեն, գաղտնաբառը և սեղմել «**Մուտք**» ստեղնը: Եթե առաջին անգամ է դիմում ներկայացվում, անհրաժեշտ է գրանցվել վերոնշյալ կայքէջում՝ սեղմելով «**Գրանցվել**» ստեղնը:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է բացված պատուհանի վերևի աջ անկյունում՝ «**Իմ էջը**» բաժնում («**Ծանուցումներ**» (զանգակ նշանի տեսքով է) բաժնի կողքը), լրացնել «**Անձնական տվյալներ**», «**Այլ տվյալներ**», «**Կրթություն**», «**Օտար լեզուներ**», «**Համակարգչային ծրագրեր**» ենթաբաժինները, պարտադիր լրացման ենթակա բոլոր դաշտերը, կցել հայտարարության մեջ նշված անհրաժեշտ փաստաթղթերի լուսապատճենները, լուսանկարը և սեղմել «**Պահպանել փոփոխությունները**» ստեղնը:

Լրացնելով «**Իմ էջի**» անձնական տվյալները, կցելով պահանջվող փաստաթղթերը՝ անհրաժեշտ է արդեն իսկ գրանցված օգտատիրոջ էջում՝ «**Մրցույթներ**» բաժնում գտնել կոնկրետ պաշտոնի համար անցկացվող մրցույթի մասին հրապարակված հայտարարությունը և «**Գործողություններ**» դաշտի ներքո նշված «**Դիմել**» ստեղնով ներկայացնել դիմումը, որից անմիջապես հետո քաղաքացին ստանում է ծանուցում դիմումն ընդունվելու մասին:

Դիմումի կարգավիճակի մասին տեղեկատվություն կարելի է ստանալ նաև օգտատիրոջ անձնական էջի «**Մրցույթներ**» բաժնի «**Հայտարարություններ**» ենթաբաժնում կոնկրետ պաշտոնի համար հայտարարված մրցույթի տողում «**Գործողություններ**» դաշտի ներքո գրառումից. նշված հատվածում՝

ա) եթե ակտիվ է «**Դիմել**» ստեղնը, ապա դիմումը դեռևս գրանցված չէ,

բ) եթե ակտիվ է «**Իմ դիմումը**» ստեղնը, ապա դիմումը ներկայացված է Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին, և այն ուսումնասիրման փուլում է,

գ) եթե ակտիվ է «**Խմբագրել**» ստեղնը, ապա անհրաժեշտ է խմբագրել դիմումը՝ շտկելով փաստաթղթերի թերություններն ու սխալները, և կրկին ներկայացնել այն:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում փաստաթղթերը կարող են հետ վերադարձվել քաղաքացուն՝ խմբագրման համար: Նման դեպքում քաղաքացին պարտավոր է ծանուցումն ուղարկելուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում կրկին դիմել՝ վերացնելով փաստաթղթերի թերություններն ու ուղղելով սխալները, որոնց մասին քաղաքացին ծանուցվում է «**Իմ էջի**» «**Ծանուցումներ**» բաժնի և էլեկտրոնային փոստի միջոցով: Փաստաթղթերի թերությունների և սխալների մասին մեկնաբանությունը

քաղաքացին կարող է տեսնել՝ բացելով «**Իմ էջի**» «**Մրցույթներ**» բաժնի համապատասխան հայտարարության հերթական համարից առաջ դրված ⊕ նշանը:

Փաստաթղթերը խմբագրելու համար անհրաժեշտ է այցելել «**Անձնական էջ**»-ի «**Մրցույթներ**» բաժնի «**Հայտարարություններ**» ենթաբաժին, ընտրել կոնկրետ պաշտոնի համար հրապարակված հայտարարությունը, սեղմել «**Գործողություններ**» դաշտի ներքո նշված «**Խմբագրել»** ստեղնը, կատարել փոփոխությունները և ներքևում նշված «**Դիմել**» ստեղնի միջոցով դիմումը կրկին ներկայացնել:

Համակարգում գրանցվելուց հետո քաղաքացին իր «**Անձնական էջ**» կարող է մուտք գործել՝ այցելելով https://hartak.cso.gov.am/ հղման «**Անձնական էջ**» բաժինը, որտեղ անհրաժեշտ է լրացնել գրանցված էլեկտրոնային փոստի հասցեն և գաղտնաբառը:

Քաղաքացիները թեստավորմանը ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով:

Մրցույթի մասնակիցների մուտքը թեստավորման սենյակ դադարեցվում է թեստավորումը սկսելուց 10 րոպե առաջ:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները մրցույթի վերաբերյալ հարցերի և լրացուցիչ տեղեկությունների համար կարող են դիմել Կոմիտեի անձնակազմի կառավարման բաժին (հասցե՝ ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ, 703 սենյակ, հեռ.՝ (+374 10) 300109 (ներքին՝ 760), էլեկտրոնային փոստի հասցե՝ hr@hesc.am):

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ – 23.05.2025 թ.

ԹԵՍՏԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԱՄՍԱԹԻՎ – 19.06.2025 թ.

ԹԵՍՏԻ ՓՈՒԼԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԺԱՄ – 11:00

ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ – ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, 9-րդ հարկ

ԹԵՍՏԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ – 90 րոպե

ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

- ՀՀ Սահմանադրություն (հոդվածներ՝ 1-6, 13, 25, 27, 40-44, 47-49, 72-73, 88-93, 103, 129, 131)

  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=143723

- «Քաղաքացիական ծառայության մասին» օրենք (հոդվածներ՝ 4-10, 12-13, 16-25, 30-31, 33, 36-37)

  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=204205

- «Հանրային ծառայության մասին օրենք» (հոդվածներ՝ 3-9, 12-16, 18-20, 31, 33)

  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=203925

- «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենք (հոդվածներ՝ 2-4, 9-20, 23, 33-38)

  հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187324

- «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենք (հոդվածներ՝ 3-7)

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=187307

- «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենք (հոդվածներ՝ 1-6, 12-17, 23-24)

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191180

- «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» օրենք (հոդվածներ՝ 2-11)

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=24697

- «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենք (հոդվածներ՝ 3-15, 17-24)

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=199677

- «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենք (հոդվածներ՝ 3-6, 8-9, 11, 23, 25)

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121477

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հուլիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 28-Լ հրաման

հղումը՝ http://scs.am/files/kanonadrutyun.pdf

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականների գնահատման և կատարողականների հիման վրա պարգևատրման կարգը, ինչպես նաև քրեակատարողական, պրոբացիայի, փրկարարական և էկոպարեկային ծառայողների կատարողականների գնահատման կարգը հաստատելու մասին» N 1510-Ն որոշում

հղումը՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=197910

- Ինֆորմատիկա 7-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական դպրոցի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ.Աղգաշյան: Երևան 2012, (էջեր՝ 4-8, 44-47, 81-86, 105-106)

հղումը՝ http://fliphtml5.com/fumf/egdx

- Ինֆորմատիկա 8-րդ դասարան: Հանրակրթական ավագ դպրոցի ընդհանուր և հումանիտար հոսքերի համար: Ս.Ս.Ավետիսյան, Ա.Վ.Դանիելյան: Մասնագիտական խմբագիր՝ Ռ.Վ.Աղգաշյան: Երևան 2013, (էջեր՝ 4-5, 29-32, 45-46)

հղումը՝ https://fliphtml5.com/fumf/irey/#p=2

- «Գրավոր խոսք», Վազգեն Գաբրիելյան, երրորդ լրամշակված հրատարակություն, Լիմուշ հրատարակչություն, Երևան 2012 թ., (էջեր՝ 70-111)

հղումը՝ http://www.parliament.am/library/books/gravor-khosq.pdf

ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐ

- «Հաշվետվությունների մշակում»

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/6.pdf

- «Խնդրի լուծում»

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/4.pdf

- «Բարեվարքություն»

հղումը՝ https://www.gov.am/u_files/file/Haytararutyunner/3.pdf

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ – 23.06.2025 թ.

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄ – 11:00

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ – ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե, 9-րդ հարկ

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ – Հարցարան

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՉԱՓ – 189696 (մեկ հարյուր ութսունինը հազար վեց հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ:

ԱՆՁՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐ

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, պետք է ունենա պատասխանատվության բարձր զգացում:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ – hr@hesc.am

ՀԱՍՑԵ - ք. Երևան, Օրբելի եղբայրների փողոց 22, 7-րդ հարկ

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ – 010.300109 (ներքին՝ 760)

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ – 19.05.2025 թ.